# 382 Ի՜նչ գեղեցիկ է մեր Հայաստանը,

1. Ի՜նչ գեղեցիկ է մեր Հայաստանը,
Որքան ուրախ ենք մենք,
Քրիստոսի սերը, հավատքն ու հույսը
Առատ լցնում են մեզ:

2. Ի՜նչ կենարար են ջերմ քարոզները՝
Իմաստություն հագած,
Ի՜նչ սքանչելի են վառ աղոթքները՝
Հոգու կրակով լցված:

3. Ի՜նչ հաճելի են սուրբ սաղմոսները՝
Սրտի խորքից բխած,
Ի՜նչ հրաշալի է այցելությունը՝
Աստծո Հոգուց իջած:

4. Ինչո՞ւ ես տխուր, ինչո՞ւ ես տրտմած,
Քաղցր հոգով հայ ազգ,
Տերը կանչում է, քեզ շատ սիրում է,
Ծտապի՜ր դառնալ Նրան:

5. Քո սուրբ պապերը Քրիստոսի սերը
Քեզ որպես հիմք դրին,
Կրեցին տանջանքը, զոհեցին կյանքը,
Քեզ փրկության հասցրին:

6. Վեհ Արարատը, Նոյի տապանը
Տերը քեզ նվիրեց,
Առաքյալներին Իր սուրբ ձեռքերով
Քեզ առաջնորդ կարգեց:

7. Քո հանցանքները, ծանր մեղքերը
Նա խաչի վրա գամեց,
Թափեց արյունը, կրեց ցավերդ,
Որ զորությամբ աճես:

8. Լուսափայլ Քրիստո՛ս, Դու ես մեր կյանքը,
Միակ հույսն ես հայոց,
Լսի՜ր հայ ազգիս, տառապած ազգիս
Ների՜ր, սրբի՜ր, փրկի՜ր: